

ՀԱՍՏՈՏՏԻՒԼՆԵՐ

Տնօրեն Լ. Բալյան

<<31> 08. 2022 թ.



**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

<<ԶԱՐԵՆՑԱՎԱՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ
ԱՌԱՋԻՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱՐ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ

Յ-ՐԴ Ա ԴԱՍԱՐԱՆ

ԴԱՍՂԵԿ՝ ՎԱՐՍԵՆԻԿ ՎԻԿՏՈՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

<<2022-2023>>ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Քաղվածք

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ (կրճատումով)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, ըստ կրթական մակարդակների շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, սովորողների գնահատման համակարգը:

V. ՄԻԶՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Միջնակարգ կրթության բովանդակային բաղադրիչները որոշակիացվում են ըստ ուսումնական բնագավառների և հանրակրթական դպրոցի աստիճանների՝ հաշվի առնելով սովորողների զարգացման ֆիզիոլոգիական, հոգեբանական և ազգային առանձնահատկությունները:

2. Կարողություններ և հմտություններ Այս բաղադրիչով տրված կարողությունների և հմտությունների ամբողջությունը սովորողին հնարավորություն է ընձեռում գործնականում կիրառել ստացված գիտելիքները, հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները, նպաստում է նրա սոցիալականացմանը:

Չափորոշիչներում առանձնակի կարևորվում են ճանաչողության հետևյալ մեթոդները՝ վերլուծում, մասնավորում, համադրում, վերացարկում, անդրադարձում, մակածում (ինդուկցիա), արտածում (դեդուկցիա), ընդհանրացում, կանխատեսում:

1) Ճանաչողական, տրամաբանական կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է՝ սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ ու հմտություններ, այդ թվում՝

ա. գիտելիքներ ձեռք բերել՝ զգայության, ընկալման և մտապատկերման միջոցով,

բ. վերլուծել՝ քննարկման, մեկնաբանման, տարանջատման, համեմատության, խմբավորման միջոցով,

գ. մտահանգումներ անել՝ ամբողջացման, հակադրման, բնույթագրման, հիմնավորման, ամփոփման, կշռադատման միջոցով, դ. ընդհանրացնել և համադրել՝ վերացարկման, գնահատման, արժևորման, փաստարկման, ապացուցման, կանխատեսման, ծրագրման միջոցով,

ե. հիմնախնդիրը դիտարկել տարբեր տեսանկյուններից, ուսումնասիրել դրա լուծման հնարավոր եղանակները և գտնել լուծումներ,

զ. երևույթների նկատմամբ դրսևորել առողջ հետաքրքրություն և քննադատական մոտեցում,

է. վերլուծել իրավիճակը և կատարել եզրակացություններ,

ը. ինքնուրույն որոշումներ ընդունել և հիմնավորել,

թ. նպատակներ դնել, մշակել դրանց հասնելու ուղիներ և ծրագրել սեփական գործը.

2) հաղորդակցական կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. լսել, ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել,

բ. բանավիճել, բանավոր և գրավոր տրամաբանված խոսք կառուցել,

գ. ըստ նշանակության և տեղի ուղի ուղղորդել սովորած տեքստները (եզրերը), հասկացությունները և արտահայտությունները,

դ. հասկանալ և ճիշտ օգտագործել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները,

ե. օգտվել ժամանակակից հաղորդակցման տեխնիկական միջոցներից և այլն.

3) համագործակցային կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. աշխատել խմբում, միասնական որոշումներ ընդունել և դրանց համար պատասխանատվություն կրել,

բ. սովորել և սովորեցնել,

գ. դրական հարաբերություններ ստեղծել, դրսևորել առողջ մրցակցություն,

դ. սեփական շահը գիտակցելով՝ ճանաչել և ընդունել ուրիշների շահերը,

ե. բախումային իրավիճակներում հավասարակշռված պահվածք դրսևորել,

զ. ուսման ընթացքում և աշխատանքային հարաբերություններում լինել բարեկիրթ, հարգել գործընկերոջ իրավունքները,

է. գերծ մնալ բարոյական չափանիշներին հակասող նախապաշարումներից, կանխակալ մոտեցումներից,

ը. իրավիճակները դիտարկել և մեկնաբանել այլոց տեսանկյունից և այլն.

4) ստեղծագործական կարողություններ ենթաբաղադրիչը նպատակ ունի զարգացնելու սովորողի ստեղծագործական ընդունակություններն ու երևակայությունը, որպեսզի յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները,

բ. դրսևորել ստեղծագործական երևակայություն,

գ. երևակայել, խորհել և ենթադրություններ անել ապագայի մասին,

դ. ընկալել և ընդունել նյութական և հոգևոր նոր արժեքները.

5) ինքնուրույն գործունեության կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. անաչառ գնահատել սեփական ուժերն ու կարողությունները և ըստ այդմ ծավալել ուսումնական, աշխատանքային գործունեություն,

բ. գիտակցել սեփական գործի կարևորությունը, դրա նկատմամբ պատասխանատվություն և պարտաճանաչություն դրսևորել,

գ. ճիշտ տնօրինել ժամանակը, մշակել և պահպանել աշխատանքի և հանգստի ժամակարգ (ռեժիմ), վերահսկել սեփական վարքը,

դ. խնամել սեփական մարմինը, դրսևորել այն մարզելու կամք,

ե. զբաղվել ինքնադաստիարակությամբ և ինքնակրթությամբ,

զ. կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, գնահատել սեփական քայլերը և դրանց հետևանքները:

3. Արժեքային համակարգ

Մույն բաղադրիչով նախատեսված համակարգն արտահայտվում է սովորողի համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի միջոցով:

1) Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

ա. գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,

բ. հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

գ. գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,

դ. գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,

ե. կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,

զ. կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը,

է. գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ. լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,

ը. գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,

թ. հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,

ժ. անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,

ժա. դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,

ժբ. մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>>, պետական ոչ առևտրային կազմակերպության (կրճատումով)

42. Դասարանի ղեկավարը (դասղեկը)

- ա) դաստիարակչական աշխատանք է կատարում՝ իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ,
 - բ) ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնականությունը.
 - գ) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն,
 - դ) իրականացնում է դասարանի համար սահմանված գործառնությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին
 - ե) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ, հետևում տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի կազմակերպմանը,
 - զ) հաստատության մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում վարքի կանոնները կոպտորեն խախտած սովորողի հարցը.
 - է) արգելվում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:
71. Հաստատության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից:

73. Սովորողն իրավունք ունի՝

- ա) անվճար ստանալու տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն,
 - բ) անկախ բնակության վայրից սահմանված կարգով ընտրելու հաստատությունը և ուսուցման
 - գ) անվճար օգտվելու հաստատության առանձին ծառայություններից.
 - դ) հաստատությունում յուրացնելու լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր.
 - ե) ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները
 - զ) առանց հիմնական կրթություն ստանալու՝ 16 տարին լրանալուց հետո, ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ, թողնելու ուսումը:
74. Հաստատությանն արգելվում է, առանց ծնողների և սովորողների համաձայնության, սովորողներին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն հանրակրթական ծրագրերով և սույն կանոնադրությամբ:
75. Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:
76. Սովորողը պարտավոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել հաստատության գույքին, հարգել հաստատության սովորողների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը, պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները:
77. Հաստատության ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտելու համար սովորողը նախարարության սահմանած կարգով կարող է հեռացվել հաստատությունից:
78. Ծնողն իրավունք ունի պաշտպանելու երեխայի օրինական շահերն ու իրավունքները, մասնակցելու հաստատության կառավարմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏՐԱՆՑԵՐԻ ՄԱՍԻՆ	2-3
ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱՆՎՈՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	4-9
ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ	10-11
ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ,	
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ	12
ԱՇԽԱՏՐԱՆՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ,	
ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ և ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ	13
ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱՆՎՈՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ	14
ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԺՎԱՐ ԴԱՍՏԻԱՐԱՆՎՈՐ,	
ՍՈՑԻԱԼԱՊԵՏ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԱՇԽԱՏՐԱՆՑԵՐԻ ՀԵՏ	15
ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ	16
ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ	17
ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ	18
ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՒՍԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ	19
ՆՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	20

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

համար	հասցեն	Հեռախոսի համարը	Ծնողի (խնամակալի) աշխատանքի վայրը կամ զբաղմունքը	Ընտանիքի սոցիալական վիճակը	ընկերություն
1	3-16-44	077-41-92-85	Չի աշխատում	ապահով	Կատարված է
2	3-13-14	077-37-89-37	Չի աշխատում	ապահով	Կատարված է
3	2-12-31	093-21-38-33	„Չարենց,, մարկետ	ապահով	Կատարված է
4	3-14- 30	094-86-76-21	Չի աշխատում	ապահով	Կատարված է
5	3-20-15	098-78-33-58	ԱԴՄ ավանստահատ	ապահով	Կատարված է
6	3-32-1	093-11-94-98	„Ռեդիսենտ,, ՍՊԸ	ապահով	Կատարված է
7	3-14-7	093-93-64-03	Չարենցավանի արխիվ	ապահով	Կատարված է
8	1-1-1	093-91-04-36	Չարենցավանի 3 դպրոց	ապահով	Կատարված է
9	1-6-8	098-57-05-74	„Սեդա-տատ,, ՍՊԸ	ապահով	Կատարված է
10	3-10-11	098-62-35-63	ՉՄՄՓ փաստաթղթ	ապահով	Կատարված է
11	3-19- 11	077-80-36-00	Չարենցավանի ՈԲ	ապահով	Կատարված է
12	3-15-33	077-86-86-94	Չի աշխատում	ապահով	Կատարված է
13	3-41-18	093-26-10-63	Չարենց. 3 դպրոց	ապահով	Կատարված է
14	3-16-6	093-99-51-56	Չի աշխատում	անապահով	Կատարված է
15	8-17-21	077-44-71-70	Չի աշխատում	ապահով	Կատարված է
16	7-11-34	093-50-57-91	Չի աշխատում	ապահով	Կատարված է
17	3-11-29	098-59-13-13	Չարենցավանի ՈԲ	ապահով	Կատարված է
18	2-12-14	098-90-72-95	Չի աշխատում	ապահով	Կատարված է
19	3-32-27	093-85-16-19	ՀՀ ԱՆ Հրազդան ՔԿՀ	ապահով	Կատարված է
20	3-12-36	094-06-49-08	„Այֆուդ,, սրճարան	ապահով	Կատարված է
21	3-31-34	094-64-31-58	Չարենցավանի 3 դպրոց	ապահով	Կատարված է
22	Այգեստան 3-3-1/2	094-63-11-60	Չի աշխատում	ապահով	Կատարված է
23	3-19-2	093-52-50-59	ԿԲԱԿ տնտեսվար	ապահով	Կատարված է
24	5-16-12	094-15-75-08	ՀՀՊՆ պայմանագրային զինծառայող	ապահով	Կատարված է
25	8-6- 10	093-70-01-91	Արարատ բանկ դրամարկդի վարիչ	ապահով	Կատարված է
26	3-32-39	077-05-92-25	Սլավ Մեդ ԲԿ	ապահով	Կատարված է
27	7-8-11	093-28-01-38	Լումաս ՍՊԸ	ապահով	Կատարված է
28	6-8-35	098-09-52-35	Չի աշխատում	ապահով	Կատարված է
29	7-9-26	077-50-18-36	Չարենցավանի ՈԲ	ապահով	Կատարված է
30	3-3-7	093-70-72-55	ՀՀ ՊՆ պայմանագրային զինծառայող	ապահով	Կատարված է
31					
32					

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)՝ Երրորդ Ա դասարանի կազմում ներառված է երեսուն աշակերտ ,որից 12 աղջիկ, 18 տղա : Աշակերտներից Միրզոյան Նարեկն ունի առանձնահատուկ ուշադրության կարիք : Որպես դասարանի ավագ ընտրվեց Բադալյան Ստելլան ,սահմանվեց նաև հերթապահության ցուցակ : Նախապես բաժանվել էին դասագրքերը , բոլոր աշակերտները ստացել են անհրաժեշտ դասագրքերը : Դասարանը դպրոց է հաճախում ամբողջական կազմով : Աշակերտները կօգտագործեն օրագիր,որի վարման կարգին արդեն ծանոթ են նախորդ ուսումնական տարվանից : Իբրև նոր ուսուցանվող առարկա ավելացավ անգլերենը : Այս ուսումնական տարին սկսեցինք համալրմամբ, Խաչատրյան Հայկ Արթուրի, որպես նոր աշակերտ արագ ինտեգրվեց և դարձավ ամբողջի մի մասը : Դասարանի աշակերտների մեծ մասն ակտիվ , աշխույժ, շարժուն ,շփվող երեխաներ են , որոնք փորձում են լինել առաջատար, դասարանում առկա է առողջ մրցակցային մթնոլորտ :

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ը_____Անհատի ձևավորման դժվարին գործում մեծ տեղ և դեր ունի ուսումնադաստիարակչական բարդ գործընթացը: Ուստի նախատեսվում է ձևավորել այնպիսի որակներ,ինչպիսիք են պարտաճանաչությունը մաքրասիրությունը, ազնվությունը, աշխատասիրությունը,կարգապահությունը, ընկերասիրությունը, ինքնուրույնությունը, դժվարություններից չվախենալու, հաղթահարելու__ընդունակությունը, հայրենասիրությունը և այլն : Ստեղծել,կառուցել հստակ տարբերակված արժեհամակարգ և հետամուտ լինել ,որ այն դառնա կրտսեր դպրոցականի սեփականությունը:Սովորեցնել նաև համակեցության տարրական կանոնները:

3 ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱԸՆԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն**՝ Աշակերտներն անգիր ճանաչեն ազգային խորհրդանիշերը \ղրոշ, _գերբ, հիմն\։ Իսկ ուսումնական տարվա ընթացքում մանրամասնորեն լուսաբանել բոլոր ազգային տոները: _Բացատրել ,մեկնաբանել ազգային տոների ծագումը և____դրանց ուղեկցվող ծիսակատարությունների խորհուրդը : Սովորեցնել նաև Տերունական աղոթքը :

3.2 **Գեղագիտական դաստիարակությունն** իրականացվում է մասնավորապես երաժշտության, կերպարվեստի, տեխնոլոգիայի միջոցով :Աշակերտների մոտ ձևավորվում է ճաշակ: Ձեռք են բերվում նկարելու, գույները համադրելու,ստեղծագործելու, տարբեր նյութերից սեփական ձեռքերով բարիքներ պատրաստելու կարողություններ: Ինչպես նաև կարևոր է այցելություններ կազմակերպել դեպի որևէ ցուցահանդես, տիկնիկային թատրոն կամ կրկես :

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակությունն իրականացվում է երգերի և հայրենասիրական բովանդակություն ունեցող դասանյութերի միջոցով ,որոնք զետեղված են հիմնականում Մայրենի լեզվի դասագրքում : Ինչպես նաև մատնանշել կենդանի, արդիական օրինակներ:

3.4 Ֆիզիկական դաստիարակությունն իրականացվում է շաբաթական երկու դասաժամով : Աշակերտները կատարում են զարգացնող, հավասարակշռության , համալիր վարժություններ : Շեշտադրվում են նաև շարժախաղերը, որոնք զարգացնում են արագաշարժություն, ճարպկություն, արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողություն : Սպորտը մշակում է կամքի ուժ,աշակերտներին դարձնելով մրցունակ:

3.5 Աշխատանքային դաստիարակությունը սկսվում է աշխատաժամանակը ճիշտ կառավարելու կարողության ձևավորումից : Շատ կարևոր է օրվա ռեժիմի առկայությունը ,աշակերտի գործունեության ոլորտները : Պետք է մշակել արդյունավետ աշխատանք կազմակերպելու տեխնոլոգիա : Ինչպես նաև զարգացնել աշխատասիրություն :

3.6 Բնապահպանական դաստիարակության առանցք է հանդիսանում շրջակա միջավայրի մաքրության պահպանումը :Ինչպես նաև խնամքով վերաբերվել դպրոցի գույքին ,դասագրքերին , տետրերին , գունավոր թղթերին ,այն ամենին ինչը պատրաստված է փայտից :Սովորեցնել պահպանել բնությունը ,օգտվելով նրա բարիքներից ,այլ ոչ թե վնասել:

3.7 Դպրոց ընտանիք կապն իրականացվում է ծնողական ժողովների և ծնողկոմիտեի միջոցով :

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	կատարողներ
1.	ա/Դասագրքերի բաշխում : բ/Աշխատանքային պլանի կազմում:	01.09.2022թ. 09.09.2022թ.	Դասվար
	գ/Դասարանի ակտիվի ընտրություն :		
	դ/ ,,Կարգապահություն ամեն օր,, դ/ժ		
	ե/ Ծնողական ժողովի անցկացում: ԾԽ ձևավորում:		
	զ/Հաշվառել ծնողագուրկ, սոց. անապահով, դժվար դաստիարակվող սովորոսներին և ներկայացնել ցուցակներ:		
2.	ա/Դասարանական անկյան ձևավորում :	12.09.2022թ.	Դասվար
	բ/Դասարանում հերթապահության կազմակերպում:	16.09.2022թ.	
	գ/,, Իմ առօրյան,, դ/ժ		
3.	ա/Ծանոթացնել դպրոցի տարհանման պլանին:	19.09.2022թ.	
	բ/ստուգել սովորողների գրատետրերի վիճակը:	23.09.2022թ.	Դասվար, ԾԽ
	գ/Անցկացնել դասդեկի դասալսումներ:		
	դ/ ,, Իմ պահարանն ու անձնական իրերը,, դ/ժ ե/Մասնակցել ՀՀ անկախության 31ամյակին նվիրված ,,Անկախության ճանապարհին կորցրեցինք,, տոհանին:		ԴԱԿ
4.	ա/Աշակերտներին ներկայացնել դպրոցի ներքին կարգապահական կանոնները:	26.09.2022թ.	Դասվար
		30.09.2022թ.	
	բ/Դասարանի սանիտարահիգիենիկ վիճակի ստուգում /փոխնորդ կոշիկներ, հագուստ, անձեռոցիկների առկայ/		
	գ/ ,, Ով է հետիոտնը,, դ/ժ		
	դ/,,Ձեռք բերված խաղաղություն ,, թեմատիկ կավճանկար		
5.	ա/ Ուսուցչի օրը մեր դպրոցում/ բացիկների պատրաստում / :	03.10.2022թ.	Դասվար
	բ/ Դասարանում հերթապահության կազմակերպում :	07.10.2022թ.	

	գ/ „Ուսուցչի դերը իմ կյանքում „ դ/ժ		
6.	ա/ Դասագրքերով և գրենական պիտույքներով ապահովվածության վիճակի ստուգում :	10.10.2022թ. 14.10.2022թ.	Դասվար
	բ/Շնորհալի աշակերտների ցուցակի կազմում :		
	գ/„Աշխատանքի անհրաժեշտությունը„ դ/ժ		
7.	ա/„ Անվտանգ երթևեկության կանոններ„ տեսաֆիլմի դիտում	17.10.2022թ. 21.10.2022թ.	Դասվար
	բ/ Դասասենյակի հիմնավոր մաքրում :		
	գ/ Ծնողական ժողովի անցկացում :		
	դ/„Հետիոտների տեղաշարժը փողոցներով և ճանապարհներով „ դ/ժ /աշնանային արձակուրդ/		
8.	ա/ Այցելություն դպրոցի գրադարան: բ/Ծնողներին ներգրավել դաստիարակչական աշխատանքներում:	31.10.2022թ. 04.11.2022թ.	Դասվար,գրադարանավար
	գ/ „Դարձիր գրադարանի բարեկամ„ դ/ժ		
9.	ա/ Հերթապահության կազմակերպում : բ/ Դասագրքերի վիճակի ստուգում :	07.11.2022թ. 11.11.2022թ.	Դասվար
	գ/ „Առողջ ապրելակերպը սկսվում է ճիշտ արթնանալուց„ դ/ժ		

10.	ա/ Համագործակցություն դասավանդող ուսուցիչների հետ:	14.11.2022թ 18.11.2022թ.	Դասվար,ֆիզ ուսուցիչ
	բ/Մասնակցություն „Արագ, ուժեղ, համարձակ„ համադպրոցական սպորտլանդիային :		
	գ/ „Մաքրությունն առողջության երաշխիք „ դ/ժ		
11.	ա/Անհատական աշխատանք դժվար դաստիարակվող և առանձնահատուկ ուշադրության կարիք ունեցող աշակերտների ծնողների հետ :	21.11.2022թ. 25.11.2022թ.	Դասվար, Հոգեբան Մակավարժի օգնական
	բ/Ուսուցողական խաղ„Ճանապարհային երթևեկություն,		
	գ/դ/ժ „Հայրենիք կերտողը հենց ես եմ „		
12.	ա/Հանդիպում դպրոցի բուժքրոջ հետ, „Առողջ ապրելակերպ„ թեմայով զրույց :	28.11.2022թ 02.12.2022թ	Դասվար, բուժքույր

	բ/ Մեմինար քննարկում ծնողների շրջանում ,, Կրտսեր դպրոցականների յուրօրինակությունները,, :		
	գ/ ,,Իմ առողջությունն իմ մաքուր ձեռքերում է ,,դ/ժ		
13.	ա/Դասարանական անկյան թարմացում : բ/ Զրույց բնական աղետների վերաբերյալ ,ֆիլմի դիտում :	05.12.2022թ 09.12.2022թ	Դասվար
	գ/ ,,Աշակերտների գործողությունները բնական աղետների ժամանակ ,, դ/ժ		
14.	ա/Դասասենյակի նախապատրաստումը Նոր տարվան: բ/Ամանորյա բացիկների պատրաստում :	12.12.2022թ 16.12.2022թ	Դասվար,ԾԽ
	գ/,,Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները դպրոցում,, դ/ժ		
15.	ա/ Աշխատանք անհարգելի բացակայող և հաճախ ուշացող աշակերտների ծնողների հետ: բ/ Աշակերտների առաջադիմության գնահատում :	19.12.2022թ. 23.12.2022թ.	Դասվար
	գ/ ,,Ով է ինձ համար հերոս ,,դ/ժ		
	դ/Համադպրոցական ծնողական ժողով : /ձմեռային արձ/		
	II ԿԻՍԱՄՅԱԿ		
16.	ա/ Դպրոցական դասագրքերի և աշակերտական գրենական պիտույքների ստուգում : բ/Զրույց դասարանի ակտիվի կազմի հետ : գ/,,Աշխատասիրությունը հաջողության առաջին պայմանն է,, դ/ժ	09.01.2023թ 13.01.2023թ	Դասվար
17.	ա/ Դասագրքերի վերանորոգում : բ/ Կատարվելիք աշխատանքի քայլաշարի մշակում, սովորել պլանավորել : գ/ ,, Ես և իմ անունը,, դ/ժ	16.01.2023թ 20.01.2023թ	Դասվար
18.	ա/ Հետևել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին , /փոխնորդների առկայություն / բ/Մասնակցել հայոց բանակի կազմավորման 31 ամյակին նվիրված համադպրոցական միջոցառմանը : գ/ ,,Ինչպես խուսափել վիրուսներից ,, դ/ժ	23.01.2023թ 27.01.2023թ	Դասվար
	դ/ ,, Հայաստան ջան,, հանդես –ցերեկույթ :		ՄԿԱ-ի գծ. փոխսնօրեն
			դասվար

19.	ա/ Տեխնոլոգիայի և կերպարվեստի թղթապանակների համալրում անհրաժեշտ նյութերով :	30.01.2023թ 03.02.2023թ	Դասվար,ԾԽ
	բ/ „Ուսուցանող դասընկեր,, կազմել զույգեր ուժեղ-թույլ աշակերտների,տալ հանձնարարականներ,հետևել ընթացքին:		
	գ/„ Իմ բարեկամ թաշկինակը,, դ/ժ		
20.	ա/Հարստացնել դասարանական անկյունը :	06.02.2023թ 10.02.2023թ	Դասվար
	բ/Պատրաստել փոքրիկ գրքեր/ գրադարանային շաբաթ/ Գիրք նվիրելու օրը նվիրել ինքնաշեն գրքեր:		
	գ/ „Իմ ամենասիրելի հեքիաթը,, դ/ժ		
21.	ա/ Դասասենյակի մաքրում :	13.02.2023թ 17.02.2023թ	Դասվար,ԾԽ
	բ/Հետևել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին:		
	գ/ „Ինչպես անել ,որ չհիվանդանալ ,,դ/ժ		
22.	ա/ „Ինչ է պատիժը,, „Պատժի ճիշտ կիրառման եղանակները,, սեմինար-քննարկում ծնողների մասնակցությունը :	20.02.2023թ 24.02.2023թ	Դասվար, ծնողներ, հոգեբան
	բ/ Ներգրավել ծնողներին դաստիարակչական գործընթացում :		
	գ/„ Լեզուն զենք է , գիտելիքը ուժ,, դ/ժ		
23.	ա/ Աշխատանքային տետրերի ստուգում :	27.02.2023թ 03.03.2023թ	Դասվար
	բ/ Անհատական աշխատանք թույլ աշակերտների հետ:		
	գ/ „Աշխատանքը մայրն է ամեն բարիքի,, դ/ժ		
24.	ա/ Կանանց տոնին նվիրված տոնական բացիկների պատրաստում :	06.03.2023թ 10.03.2023թ	Դասվար
	բ/ Այցելություն Ե. Չարենցի թանգարան :		
	գ/ „ Տոնը շնորհավոր, սիրելի մայրիկ,, դ/ժ		
25.	ա/ Քաղաքացիական պաշտպանության օր :	13.03.2023թ 17.03.2023թ	Դասվար, զինղեկ
	բ/ Դասագրքերի վերանորոգում :		
	գ/ „Միասնությունը ուժ է,, դ/ժ		
26.	ա/ Առաջին բուժօգնության ցուցադրում :	20.03.2023թ 24.03.2023թ	Դասվար
	բ/ Ծնողական ժողովի անցկացում :		
	գ/ „Պաշտպանել բնությունը, նշանակում է պաշտպանել հայրենիքը ,, դ/ժ		
	դ/Գարնանային արձակուրդների նախապարաստական		

	աշխատաքներ :		
27.	ա/Դասասենյակի հիմնավոր մաքրում : բ/ Դպրոցամերձ տարածքի մաքրում, ծառատունկ :	03.04.2023թ 07.04.2023թ	Դասվար, ԾԽ
	գ/ „Ծառ տնկիր, միտք սերմանիր „ դ/ժ դ/Պատրաստել բացիկներ մայրիկների համար:		
28.	ա/Մենք տոնում ենք Քրիստոնեական տոները շարքից „Սուրբ Հարության,, տոնը մեր դպրոցում :	10.04.2023թ 14.04.2023թ	Դասվար
	բ/Էկո- դաս աղբի և թափոնների ազդեցությունը մարդու վրա / ֆիլմի դիտում/		
	գ/ „Բնությունն ու մարդը: Մարդը բնության մասնիկ,, դ/ժ		
29.	ա/ Այցելություն Ծիծեռնակաբերդ : բ/ Անհատական աշխատանք առանձնահատուկ ուշադրության կարիք ունեցող երեխաների հետ:	17.04.2023թ 21.04.2023թ	Դասվար, ԾԽ հոգեբան
	գ/ „Խաղաղությունը ժպիտից է սկսվում „ դ/ժ		
30.	ա/Անհատական աշխատանք ծնողների հետ : բ/Մշակել համակեցության կանոններ, կատարել աշխատանքի բաժանում :	24.04.2023թ 28.04.2023թ	Դասվար
	գ/ „Հումորը և ծիծաղը իմ կյանքում „ դ/ժ		

31.	ա/ Դասասենյակի հիմնավոր մաքրում : բ/Դասագրքերի վերանորոգում :	02.05.2023թ. 05.05.2023թ.	Դասվար
	գ/ „Մայիսի 1-ը աշխատավորի օր „ դ/ժ		ԴԱԿ
32.	ա/ Կլոր սեղան կրտսեր դպրոցականների ծնողների հետ „Խրախուսում „ թեմայով :	08.05.2023թ. 12.05.2023թ.	Դասվար մանկավարժի օգն.
	բ/ „Լինենք իրազեկ ,պահպանենք օգոնային շերտը,, ֆիլմի դիտում :		
	գ/ „Պահպանենք ու սիրենք մեր մոլորակը „ դ/ժ		
33.	ա/ Մասնակցել „Մայիսյան հերոսամարտեր-105,, հանդիսավոր տողանին:	15.05.2023թ 19.05.2023թ	Դասվար, ԾԽ
	բ/ Այցելություն հայրենիքի պաշտպանության գործում զոհվածների հուշարձաններ :		

	գ/,, Ճանաչենք մեր հերոսներին,, դ/ժ		
34.	ա/Դասագրքերը նախապատրաստել դպրոցի գրադարանին հանձնելու :	22.05.2023թ. 26.05.2023թ	Դասվար,ԾԽ
	բ/Էքսկուրսիայի կազմակերպման հետ կապված հարցերի քննարկում :		
	գ/Աշակերտների տարեկան առաջադիմության ամփոփում :		
	դ/ Ծնողական ժողովի անցկացում :		
	ե/ „Այսօր ինքնաքննադատության օր է, համարձակ եղիր,, դ/ժ /ամառային արձակուրդ /		Դասվար

**ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ,
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ**

համար	Նախասիրական-առարկայական խմբակ	Գեղարվեստական Երաժշտական խմբակներ	Մարզական խմբակներ	Այլ խմբակներ
1				
2		Արվեստի դպ. դիոլ		
3				Նկարչ. խմբակ
4		Պարային խմբակ		
5				
6		Պարային խմբակ		
7			Սամբոի խմբ	
8				
9		Պարի խմբակ		
10		Արվեստի դպ. երգ		
11			Շոտոկան կարատե	
12		Երաժշտ. դպրոց		
13			Դյուդո	
14				
15			Շոտոկան կարատե	
16		Պարի խմբակ		
17		Արվեստի դպ. շվի		
18				
19				
20				Նկարչ. խմբակ
21			Ըմբշամարտ	
22			Դյուդո	
23			կարատե	
24				Նկարչ. խմբակ
25		Երաժշտ. դպ. դաշն.		
26				
27		Պարի խմբակ		
28			Ըմբշամարտ	
29	Շախմատի խմբակ			
30		Պարի խմբակ		
31				
32				
33				
34				
35				
36				

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը	Դասղեկի անցկացման միջոցառման (դասախոսություն, գրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	ծանոթություն
09.09.2022թ	„Կարգապահություն ամեն օր,,	Կատարված է
16.09.2022թ	„ Իմ առօրյան,,	Կատարված է
23.09.2022թ	„Իմ պահարանն ու անձնական իրերը ,,	Կատարված է
30.09.2022թ	„Ով է հետիոտնը ,,	Կատարված է
07.10.2022թ	„Ուսուցչի դերը իմ կյանքում ,,	Կատարված է
14.10.2022թ	„Աշխատանքի անհրաժեշտությունը ,,	Կատարված է
21.10.2022թ	„Հետիոտների տեղաշարժը փողոցներով և ճանապարհներով,,	Կատարված է
04.11.2022թ	„Դարձիր գրադարանի բարեկամ ,,	Կատարված է
11.11.2022թ	„Առողջ ապրելակերպը սկսվում է ճիշտ արթնանալուց ,,	Կատարված է
18.11.2022թ	„Մաքրությունն առողջության երաշխիք,,	Կատարված է
25.11.2022թ	„Հայրենիք կերտողը հենց ես եմ ,,	Կատարված է
02.12.2022թ	„Իմ առողջությունն իմ մաքուր ձեռքերում է,,	Կատարված է
09.12.2022թ	„Աշակերտների գործողութ. բնական աղետների ժամանակ ,,	Կատարված է
16.12.2022թ	„Աշակերտների իրավունքներն ու պատականությունները դպր ,,	Կատարված է
23.12.2022թ	„Ով է ինձ համար հերոս ,,	Կատարված է
13.01.2023թ	„Աշխատասիրությունն հաջողության առաջին գրավական ,,	Կատարված է
20.01.2023թ	„Ես և իմ անունը ,,	Կատարված է
27.04.2023թ	„Ինչպես խուսափել վիրուսներից ,,	Կատարված է
03.02.2023թ	„Իմ բարեկամ թաշկինակը ,,	Կատարված է
10.02.2023թ	„Իմ ամենասիրելի հեքիաթը,,	Կատարված է
17.02.2023թ	„Ինչպես անել , որ չհիվանդանալ ,,	Կատարված է
24.02.2023թ	„Լեզուն զենք է ,գիտելիքը ուժ ,,	Կատարված է
03.03.2023թ	„Աշխատանքը մայրն է ամեն բարիքի ,, / Բաց դաս /	Կատարված է
10.03.2023թ	„Տոնդ շնորհավոր ,սիրելի մայրիկ ,,	Կատարված է
17.03.2023թ	„Միասնությունը ուժ է,,	Կատարված է
24.03.2023թ	„Պաշտպանել բնությունը,նշանակում է պաշտպանել հայրենիքը,,	Կատարված է
07.04.2023թ	„Ծառ տնկիր, միտք սերմանիր,,	Կատարված է
14.04.2023թ	„Բնությունն ու մարդը: Մարդը բնության մասնիկ,,	Կատարված է
21.04.2023թ	„Խաղաղությունը ժպիտից է սկսվում ,,	Կատարված է
28.04.2023թ	„Հումորը և ծիծաղը իմ կյանքում ,,	Կատարված է
05.05.2023թ	„Մայիսի 1-ը աշխատավորի օր,,	Կատարված է
12.05.2023թ	„Պահպանենք ու սիրենք մեր մոլորակը ,,	Կատարված է
19.05.2023թ	„Ճանաչենք մեր հերոսներին,,	Կատարված է
26.05.2023թ	„Այսօր ինքնաքննադատության օր է, համարձակ եղիր ,,	Կատարված է

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման օրը	Քննարկվող հարցեր	Ժողովի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
08.09.2022թ.	Դպրոցի կարգապահական կանոնների ներկայացում ,ԾԽ ձևավորում,ուսումնադաստիարակչական հարցերի քննարկում ,սոց. անապահով,ծնողազուրկ ԿԱՊ ԿՈՒ աշակերտների հաշվառում ցուցակի կազմում,արտաքին տեսք, փոխնորդ:	Վերընտրվեց ԾԽՆ համընդհանուր համաձայնությամբ, լրացվեցին պահանջվող ցուցակները,որոշվեց ձեռք բերել անզվերենի գրատետրեր,ծանոթացվեց այս ուս. տարվա ուս. դաստ. հարցերին և նշվեց անհրաժեշտ գր. պիտույքների ցանկը:	Կատարված է
19.10.2022թ	1.Մեպտեմբեր- հոկտեմբեր ամիսների ուսումնադաստիարակչական հարցերի քննարկում; 2. Սովորողների սանիտարահիգիենիկ վիճակի մասին: 3.Մեմինար -քննարկում` <<Կրտսեր դպրոցի տարիքային յուրօրինակությունները>>	Լսեցին դասվարին 1.Քննարկվեց սովորողների առաջադիմությունը,հաճախումները և սովորողների հետ տարվող աշխատանքները: 2.Քննարկվեց սովորողների սանիտարահիգիենիկ հարցերը կապված արտաքին տեսքի,փոխնորդների և այլնի հետ: 3.Ընթերցվեց գեկույցը և ծավալվեց քննարկում գեկույցի վերաբերյալ	Կատարված է
10. 01.2023թ	1. Աշակերտների կիսամյակային գնահատականների ամփոփում: 2.Աշակերտների բացակայությունների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում: 3.Աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակի մասին/արտաքին տեսք, փոխնորդներ,հագուստ,պայուսակներ և այլն: / 4.Կարգապահական հարցերի քննարկում: 5. Ջեկույց` <<Կրտսեր դպրոցականի շփումը հասակակիցների և մեծահասակների հետ >>	Լսեցին- դասվարին 1.Դասվարը ծնողների ներկայացրեց կիսամյակային գնահատականները և խոսեց սովորողների առաջադիմությունից, քննարկվեց սովորողների հաճախումները և սովորողների հետ տարվող աշխատանքները: Դասվարը խոսեց նաև սանիտարահիգիենիկ կանոնների մասին՝նշելով ,որ ծնողները լինեն հետևողական սովորողների արտաքին տեսքի,փոխնորդների նկատմամբ: Ներկայացվեց գեկույցը և կատարվեց քննարկում:	Կատարված է
22.03.2023թ.	1.Փետրվար-մարտ ամիսների ուսումնադաստիարակչական հարցերի քննարկում: 2.Աշակերտների բացակայությունների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում: 3. Աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակի մասին /արտաքին տեսք,փոխնորդներ, հագուստ,պայուսակներ և այլն:/ 4. Կարգապահական հարցերի քննարկում: 5.Ջեկույց<<Ինչ է պատիժը>> 6.Գարնանային արձակուրդների տևողության մասին:	Առանձնաց.ուս. ցածր արդյունավետությ. ունեցող տրվեցինլ անհատական հանձարարականներ: Նշվեցին ռիսկային խմբում գտնվող աշ.բացակայությ.քանակը Քննարկվեց նաև կարգապահ.հարցեր,անցանկալի դրսևորումների մասին խոսվեց: Ջեկույցը ներկայացրեց հոգեբանը,տրվեց խորհուրդներ Գարն . արձ. մեկ շաբաթ / 27.03.2023—02.04.2023/	Կատարված է
02.06.2023թ	1.Կիսամյակային և տարեկան գնահատականների ամփոփում:2. Գալիք 2023-2024 ուստարվա կազմակերպչական հարցերի քննարկում :3.Ընթացիկ հարցեր:	Գնահատականների ամփոփում :ԾԽՆ նիստի համառոտ բովանդակությ. էքսկուրսիայի հետ կապված հարցեր, արձակուրդ. առաջադր. տարեվերջյան յուսանկար:	Կատարված է:

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ

Անցկացմա օրը	Քննարկվող հարցեր	Ծնողկոմիտեի նիստի համառոտ բովանդակություն	Ծանոթություն
08.09.2022թ.	Գրատետրերի/անգլերենի/ օրինակի ցուցադրում: Քննարկում գրատետրեր ձեռք բերելու շուրջ:	Անհրաժեշտ գումարի տրամադրում	Կատարված է
20.09.2022թ	Ճաշարանի համար սահմանված գումարի հավաքման կազմակերպում	Հավաքել անհրաժեշտ գումարը առաջին կսամյակի համար	Կատարված է
16.01.2023թ	Ճաշարանի համար սահմանված գումարի հավաքման կազմակերպում	Հավաքել անհրաժեշտ գումարը երկրորդ կիսամյակի համար	Կատարված է
24. 04. 2023թ	Տարեվերջյան լուսանկարի համար անհրաժեշտ գումարի հավաքում	Մինչև շաբաթվա վերջ գումարը հավաքել և հրավիրել նկարիչների	Կատարված է
02.06.2023թ	Էքսկուրսիայի վայրի և բովանդակության ընտրություն ,գումարի հավաքման կազմակերպում:	Կատարվելիք աշխատանքների բաժանում ,պայմանավորվածությունների ամրագրում:	Կատարված է

ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ

(ուստարվա ընթացքում կատարած աշխատանքների համառոտ ամփոփում և վերլուծություն/

Ուսումնական տարվա և սկզբում, և ավարտին 3-րդ Ա դասարանի կազմում ներառված էր 30 աշակերտ : Նախապես պլանավորված ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացվել են ամբողջությամբ : Ուսումնական տարվա ընթացքում բացակայությունների առավելագույն քանակով աչքի է ընկել Ղազարյան Մարին , նա բացակայել է 110 դասաժամ : Ուսումնական տարվա վերջում 3-րդ Ա դասարանի 30 աշակերտներից 6-ը հանդիսանում են գերազանց , 14-ը հարվածային, ետ մնացող չկա :

Աշակերտների ճնշող մեծամասնությունը որպես նոր առարկա յուրացրեց անգլերենը : Հունվար ամսին դասարանի բոլոր աշակերտների մասնակցությամբ կայացավ հանդես – ցերեկույթ՝ « Հայաստան ջան » վերնագրով : Փոքր –ինչ աղմկոտ են , աշխույժ, սիրում են ակտիվ խաղեր, յուրացրել են դասարանում սահմանված համակեցության կանոնները և հետևողականորեն հետևում են դրանց : Երբեմն կիրառում են ինքնագնահատման սանդղակ , որը հնարավորություն է տալիս վերլուծել սեփական վարքագիծը, կատարել անհրաժեշտ եզրահանգումներ և շտկել բացթողումները : Դասարանի ավագ Բադայան Ստելլան հետևողականորեն կատարում է դասղեկի հանձնարարականները, իսկ բոլոր աշակերտներն ըստ սահմանված ցուցակի իրականացնում են հերթապահություն : Ունեն ինքնակառավարման հմտություն, կազմակերպչական պարզագույն կարողություն :

Միրով են մասնակցում համադպրոցական միջոցառումներին, կազմակերպված էքսկուրսիաներին : Դասարանում առկա է առողջ մրցակցային մթնոլորտ, ձգտում են լավ սովորել արժանանալով խրախուսանքի : Ուսումնական դժվարին գործընթացում աշխատանքային արդյունավետության բարձրացման նպատակով սահմանվել են աշակերտական գույգեր / ուժեղ աշակերտ + թույլ աշակերտ սկզբունքով / , որոնց մեջ ձևավորվել է փոխօգնության ձեռք մեկնելու հմտություն : Յուրօրինակ խանդավառությամբ են գնում դպրոցում գործող ճաշարան և սիրով կարող են իրենց բաժինը տրամադրել դասընկերներից որևէ մեկին , եթե այդ պահին նախընտրում են չուտել : Ընկերասեր են , հետաքրքրվում են նորություններով սիրով աշխատում են ամենատարբեր նյութերով :

Դասվար

Գալստյան Վ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (կրճատումով)

Հոդված 11. Կրթության բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման, նրանց ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (կրճատումով)

ՀՈՂՎԱԾ 4. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱԾՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

4. Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Միջնակարգ կրթություն պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

6. Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 12-ամյա միջնակարգ կրթություն:

ՀՈՂՎԱԾ 5. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Հանրակրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական զարգացմանը, նրա անձի որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

2. Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.

- 1) հանրակրթական մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.
- 3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՐԵՎԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (կրճատումով)

ՀՈՂՎԱԾ 10. Երեխայի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք:

Երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքը ենթակա են նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության:

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, որոնելու, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով: Երեխայի տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով:

Դավանանքի ազատության և համոզմունքների արտահայտման իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, երեխայի առողջության, բարոյական նկարագրի կամ այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Արգելվում է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնության մինչև 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին:

ՀՈՂՎԱԾ 11. Երեխայի կրթության իրավունքը
Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու և ուսումնական հաստատություն ընտրելու իրավունք:

Պետական համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսևորման, տաղանդի, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար՝ հիմնելով հանրակրթական, մասնագիտական դպրոցներ, մարզական, տեխնիկական և մշակութային ստեղծագործական մանկական կենտրոններ և

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

1) սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան.

2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը.

3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը.

4) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների, օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը:

ՀՈՂՎԱԾ 20. ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

2. Սովորողն իրավունք ունի՝

- 1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.
- 2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.
- 3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնականության բազայից.
- 4) մասնակցելու ներդրոցական և արտադրոցական միջոցառումներին.
- 5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.
- 6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.
- 7) ազատորեն փնտրելու և մտաչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.
- 8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

այլն: Պետական համապատասխան մարմինները մշակում և իրականացնում են տաղանդավոր երեխաների հայտնաբերման, նրանց դաստիարակության և կրթության կազմակերպման համապատասխան ծրագրեր:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

ՀՈՂՎԱԾ 20. (կրճատումով) Երեխայի հանգստի իրավունքը
Յուրաքանչյուր երեխա ունի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին և միջոցառումներին ազատորեն մասնակցելու իրավունք:

ՀՈՂՎԱԾ 22. Երեխայի պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության իրավունք:

Ոչ չի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության և հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների:

Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա:

Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Ուսումնական հաստատության դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր» մատյանը նախատեսված է դասղեկի կողմից դասարանի հետ բազմակողմանի դաստիարակչական աշխատանքների նպատակամղված գործունեությունն, աշակերտների ուսումնառության զարգացման հիմնական ուղենիշները գիտամանկավարժական տեսանկյունից համակարգելու, նախագծելու համար:

2. Դասղեկը աշխատանքային տարեկան ծրագիրը կազմելիս նպատակահարմար է հաշվի առնել՝

- դաստիարակչական խնդիրների ճշտությունն ու իրատեսությունը,
- Աշակերտների գործունեության կազմակերպման զուգակցվածությունը ուսումնադաստիարակչական աշխատանքների նախագծվելիք գործընթացներում,
- դասավանդող ուսուցիչների, մյուս մանկավարժների ու աշակերտների, մանկավարժների ու ծնողների միասնականությունը,
- ներդասարանական, ներդպրոցական և արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ներդաշնակ կապը,
- աշակերտների տարիքային, անհատական առանձնահատկությունները, երեխաների (անհատական և ընդհանուր) դաստիարակվածության մակարդակի ու նրանց կյանքի պայմանների իրատևությունը,
- տարեկան պլան-ծրագրի փոխկապվածությունը և համաձայնեցվածությունը ուսումնական հաստատության մյուս ծրագրերի, պլանների հետ:

Դաստիարակչական աշխատանքների հիմնական խնդիրները պետք է չլինեն ոչ չափից դուրս ընդհանուր, ոչ էլ շատ կադապարված, նեղ, այլ անհրաժեշտ է նկատի ունենալ անձի ձևավորման ամբողջականությունը և դաստիարակության յուրահատկությունները՝ տարիքը, սոցիալական շրջապատը:

Մատյանը հնարավորություն է տալիս դասղեկին, ըստ ուսումնական շաբաթների համակարգելու դաստիարակչական գործընթացը, որը թույլ կտա տեսանելի դաստիարակչական գործընթացը, որը թույլ կտա տեսանելի դարձնելու ոչ միայն կատարվելիք աշխատանքները, այլև դրանց իրագործման ճշգրիտ ուղիները:

Պլան-ծրագրի բաժինների հաջորդականությունը և սերտ շարունակական կապը թույլ կտա տեսնելու աշակերտների մտավոր կարողությունների աստիճանական զարգացումը և վարքի դրական դրսևորումները, ծնող-դպրոց կապը:

- Դասղեկի տարեկան ծրագիր-պլանը համարվում է ուսումնական հաստատության համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագիր-պլանի բաղկացուցիչը:
- Դասղեկի աշխատանքային ծրագիր-պլանը կազմվում է ուսումնական տարին սկսելուց առաջ և ըստ սահմանված կարգի հաստատվում է տնօրենի կողմից:
- 10-րդ և 11-րդ էջերի, «ստացավ» և «հանձնեց» սյունակներում համառոտագրել ստացվելիք և հանձնված դասագրքերի պիտանելիության գնահատականները գերազանց –Գ, լավ –Լ, բավարար –Բ, անմխիթար –Ա

Ուսումնական տարին ավարտելուց հետո դասղեկը անցած ծրագիր-պլանի վերլուծության հիման վրա կազմում է նորը: Պլան-ծրագիրը դասղեկը պահպանում է իր մոտ մինչև տվյալ դասարանի ուսումնառության աստիճանի՝ I-IV, V-IX, X-XII, ավարտելը:

